



ԵՄ-ՀՀ «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՍԱԳՐԻ»

քաղաքացիական հասարակության պլատֆորմին անդամ դառնալու թեկնածուներին ներկայացվող պահանջներն ու գնահատման չափանիշները

- Հայաստանի եվրոպական ինտեգրման բնագավառում եւ/կամ ՀԸԳՀ-ով սահմանված ոլորտներից որեւէ մեկում առնվազն 3 տարի ակտիվ գործունեության իրականացում, որոնց արդյունքներով կազմվել է (են) զեկույց(ներ), այդ թվում՝ հետազոտություններ, վերլուծություններ, հայեցակարգեր եւ այլն (առավելագույնը 5 միավոր),
- կազմակերպության կարողությունները, այդ թվում՝ աշխատակազմ, ֆինանսավորում, գրասենյակային տարածք, կայք եւ այլն (առավելագույնը 3 միավոր),
- հանրային հեղինակությունը, արդյունավետ, կառուցողական լայն ու բազմակողմ համագործակցություն իրականացնելու կարողությունը (3 միավոր),
- ՀԸԳՀ-ի իրականացման գործում պետական կառավարման մարմիններին խորհրդատվական աջակցություն տրամադրելու տեսլականը (առավելագույնը 3 միավոր),
- ՀԸԳՀ-ի կատարման գործընթացի մշտադիտարկման տեսլականը (3 միավոր),
- անգլերենի իմացությունը. որպես անգլերենի բավարար մակարդակի իմացության ապացույց՝ դիմողը ներկայացնում է բարձրագույն կրթության պրոցեսն անգլերենով անցնելու մասին փաստաթուղթ: Հակառակ դեպքում դիմողն անցնում է Ընտրական հանձնաժողովի կողմից ընտրված որակավորված մասնագետի կողմից անգլերենի ստուգում (առավելագույնը 3 միավոր): Հանձնաժողովը կարող է սահմանել նվազագույն չափանիշներ:

Թեկնածուներին ներկայացվող պահանջների գնահատման առավելագույն միավորը 20-ն է:

